մը հաստատել այս մեքենաներէն մին՝ և միւս ամէն կայարանները հաղորդակցել անոր հետ։

Կը յուսամք որ քիչ տարիէն պիտի կարենանք տեսնել բոլոր եւրոպիոյ գետերը և լճերը լի այս ելեկտրանաւերով, որոնք թէ աւելի հանգստութիւն և դիւրութիւն կը պատճառեն ճանապարհորդաց, և թէ աւելի գեղեցիկ են տեսքով և վայելուչ։

ԾԱԾԿԵԱԼ ԳԱՆՁ ՄԸ Ի ՊՐԱԶԻԼ

Վերջերս գաղղիական և անգղիական լրագիրք կը ծանուցանէին, թէ ի Պրազիլ ի Ռիօ Ժանէյրօ Ս. Անտոնի դղեկին քանդման ժամանակ, գետնափոր ճամբաներուն մէջ՝ գտնուեցան հարիւր տասներկու տակառ 70 միլիոն ֆռանգ սպանիական ոսկի. նաև այլ հետաքրքրական թղթեր Յիսուսեանց ընկերութեան վրայ, և 20 միլիոն ոսկի Բորթուգալի թագաւորին Յովհաննէս Զ.ի, և իրեն ցեղին համար, ի պատիւ իրեն այցելութեանը ի Պրազիլ։

Կային նաև բազմութիւն գոհարեղինաց և թանկագին քարերու, և նաև ետևէ են ժողովելու ամենայն խնամքով 2,400 հազարադրամ ոսկւոյ փոշի և 945 քիլօյ ոսկւոյ գաւազան. և առանձին ցուցակի մը մէջ բոլոր ասոնք նշանակուած էին։

Թողունք այն իրաւունքը անոնց որ գտեր են այս գանձը. բայց մեծ վէճ ելած է, կ'ըսեն թէ արդեօք որուն կ'իյնայ ճշմարիտ ստացման իրաւունքը. արդեօք Պրազիլի հասարակապետութեան, թէ Բորթուգալի թագաւորին, եւ թէ Յիսուսեանց։

digitised by A.R.A.R.@